գիտէր զդաղտնի խորհուրդս նոցա · մի յուսայք ասէր օգ-
նութիւն գտանել 'ի նմանէ , հնազանդեցարուք ինձ և մի
չիոթէք զբանն · զի Մուվէլլայն առանց իմ ոչ ինչ կարէ
առնել, այլ պատրանօք ակն ունի առնուլ 'ի ձէնջ ինչս ,
եւ Խօճաքեանն բարեմիտ՝ գիտելով զանհիմն գործս ձեր
լռութեամբ վարի , եւ այսպիսի բանք բազում յերկուց
կողմանց , և խստասրտութիւն Դատաւորին յուսարեկ ա-
բար զՀայս : Թէպէտև Նուրի Էֆէնտի ասէր գրել 'ի Դուռն
զարարս Դատաւորին , այլ Հայք չառին յանձն, մի գուցէ
երկարութիւն ժամանակին խոչ լիցի գործոյն ։

Դարձաւ Ոստիկան Կուսակալին 'ի Դամասկոսէ , և ու-
բախութեամբ եմուտ յերուսաղէմ, ('ի 21 Յունիսի), եւ
'ի վաղիւն կազմեցաւ ժողով 'ի Դատարան · ընթերցաւ հր-
բամանագիր Կուսակալին , որ հրամայէր առնել զամենայն
ինչ ըստ հրովարտակին , և վասն Բեթղեհէմի մի ումեք ըն-
դիմանալ , և ոչ առնել կուսակցութիւն · Դատաւորն կո-
րագլուխ եւ լուռ նստէր փակեալ զաչս իւր ։ Ոստիկանն
ասէ՝ զի՞նչ ունիս ասել ով Դատաւոր առ այս · տա՞ս Հա-
յոց բաժանորդութեամբ զԲեթղեհէմ ըստ մտաց հրովար-
տակին ։ Լռութիւն · Նուրի Էֆէնտի , յառաջագոյն ասէր՝
թէ վճռեցի · ոչ տամ, այսօր ո՞րպէս կարէ ասել թէ վճ-
ռեցի և ետու , և ստիպէին զնա թողուլ զլռութիւնն եւ
պատասխանել , և ըստ արժանոյն գործել , և նա պատճա-
ռէր զակարութիւն իւր ։ Ահաւասիկ կեավուրք՝ զոր ինչ
արժանն է խօսեցարուք և հրաման տուք , ինձ ոչ է անկ ·
զի դուք էք գործակալք Տէրութեանն ։ Ոստիկանն ասէ՝
ստիպեցեր զիս գնալ 'ի Դամասկոս · սակայն մի կարծեր
թէ զիս Բդեշխն կոչեաց, որպէս ասացեալ ես ամենեցուն ,
այլ հրամանաւ և գրով գործակալաց Տէրութեան գնացի
պատմել զամենայն գործս քո , և զոր ինչ գրեալ էիր զի-
նէն՝ լուայ անդ · այլ ինչ և իցէ , անցեալն էանց , այժմ
զոր ինչ առնելոց ես , արա՛ · երբայ Դատաւորն զփակեալ
բերան իւր և սկսաւ խօսիլ զանպատեհս Տէրութեան՝ Կու-
սակալին և գործակալաց՝ բովանդակ մի ժամ · Նուրի Էֆէն-
տի մեղմով ինն կշտամբեաց զնա , թէ դուք իբրեւ Դա-
տաւոր Արքայի այսպէս հրապարակաւ անարգես զնա եւ
զդիր նորին , ո՞րպէս պատկառեացին ժողովականք · և մի-